

տացաւ՝ եւ Լատին եկեղեցիներու ութ մեծաւորներուն արգելեց բանադրանքով, որ երեք ամսոյ չափ կաթողիկէ Հայերու հետ յարաբերութեան մէջ չմտնեն եւ զիրենք իրենց եկեղեցիներ չընդունին, որպէս զի գործին յաջողութեան համար Հայոց Պատրիարքը պատճառանք չունենայ: Այս հրամանին միայն Յիսուսեան կրօնաւորները հակառակ գործեցին:

Անդիէն Յովհ. Գանձակեցի (կենճեցի) Պատրիարքն Հայոց (21 Մարտ 1714—1715 Սեպտ.) լրտեսներու ձեռօք իմանալով պատրաստութիւնները, փութաց Եպարքոսին նուէրներով, եւ հաղորդեց անոր՝ որ կաթողիկէ Հայերը գաղտնի ժողովք կազմած են Գաղղիոյ դեսպանին քով, ֆրանկ եղած եւ տէրութենէ պիտի ապստամբին: Եպարքոսն հրամայեց ծածուկ պահել, եւ 1714 Նոյ. 5ին (ն. տ.) յանկարծակի բռնեց Սահէթճի Սարգիս եւ Երեմիա Եպս.ները եւ հայ կաթողիկէ վարդապետ մը եւ բանտարկեց: Մեկքոն Արքեպ., որ Գաղղիոյ դեսպանին ապարանքն ապաւինած էր, իսկ Յովհաննէս Եպս. Աւստրիոյ դեսպանատունը, կաթողիկէ ժողովրդեան հրամայեց՝ որ Բ. Դուռ երթան եւ իրենց վարդապետներն ուզեն: Յաջորդ օրն իբր 200 հոգի գացին եւ պահանջեցին: Չափուշ Պաշին իւրաքանչիւրն արձանագրեց, եւ յետոյ ըսաւ. «Տակաւին չորս վարդապետ կայ դուրսը, առանց ասոնց ներկայութեան ձեր դատը չի նայուիր, եւ եթէ երեք օրւան մէջ զասոնք չբերէք, ամէնքդ կը կա-